ճակատ (ՀԲՃ) քաղաքացիական նախաձեռնության (armecofront.net) կայքերից և մյուսներին ևս **տեղեկացրու** այս խնդրի մասին:

- **Միացի՛ր** շահագործման դադարեցմանն ուղղված միջազգային առցանց ստորագրահավաքին (bit.ly/2dnNKlr), տարածիր այն և **հրավիրիր ստորագրելու** նաև ընկերներիդ:
- Եղի՛ր ակտիվ սոցիալական ցանցերում, հատկապես **Twitter-ում** և **Facebook-ում:** Ուղիղ կապի մեջ մտնի՛ր Համաշխարհային բանկի (@WorldBank), Միջազգային ֆինանսական կորպորացիայի (@IFC_org), Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկի (@EBRD) հետ՝ պահանջելով պատասխանատվություն ֆինանսավորած ծրագրերի համար: Կապ հաստատիր նաև ՄԱԿ-ի մարդու իրավունքների հանձնաժողովի (@UNHumanRights), մարդու իրավունքներով և բնապահպանական խնդիրներով զբաղվող այլ կառույցների հետ՝ պահանջելով ուշադրություն այս խնդրի վրա: Չմոռանաս կիրառել #NoMininginAmulsar հեշթեգը:
- **Հետևի՛ր** Ամուլսարի թեմայով մտահոգ քաղաքացիների կազմակերպած քննարկումներին և **մասնակցիր** միջոցառումներին (նաև ՀԲՃ-ի ֆեյսբուքյան էջով): Եղիր նախաձեռնող, ինքդ առաջարկիր լուծումներ:
- Կապ հաստատիր Ջերմուկի և հարակից համայնքների հետ: Զորակցիր և ուժեղացրու համայնքներում ընթացող **պայքարը**: Նպաստիր ներկայիս տնտեսական հնարավորությունների (կբոսաշրջություն, գյուղատնտեսություն, առողջապահություն) արժևորմանն ու զարգացմանը:
- **Տարածի՛ր այս թռուցիկը** համացանցում, քո համալսարանում, դպրոցում, աշխատավայրում, բակում:

Լինենք հաստատակամ մեր պայքարում և թույլ չտանք Հայաստանի հերթական հանքարդյունաբերական ավերն ու էկոլոգիական, տնտեսական և կենսական այս սպառնալիքի իրագործումը: Մենք բոլորս պատասխանատու ենք մեր, ապագա սերունդների և բնության առջև:

Համահայկական բնապահպանական ճակատ (ՀԲՃ) քաղաքացիական նախաձեռնություն

Կայք՝ armecofront.net
Ֆեյսբուքյան էջ՝ facebook.com/armecofront
Յութուբյան ալիք՝ youtube.com/user/armecofront
էլ. փոստ՝ armecofront@gmail.com

Ինչո՞ւ չպետք է շահագործվի Ամուլսարի ոսկու հանքավայրը

Ի՞նչ է Ամուլսարի ծրագիրը

Ամուլսարը Վայոց ձորի և Սյունիքի մարզերի սահմանագլխին գտնվող լեռնագագաթ է, Հայաստանի գանձերից մեկի՝ ջրաբանական հրաշք Ջերմուկ առողջարանային քաղաքից ընդամենը 10 կիլոմետր հեռավորության վրա: Ամուլսարում իբր հայտնաբերվել են ոսկու արդյունաբերական պաշարներ, որոնք ՀՀ վարչակազմն անխոհեմաբար և ապօրինաբար շահագործման է հանձնել բրիտանական օֆշորում գրանցված անհայտ ծագման «Լիդիան Ինթերնեշընալ» ընկերությանը: Հանքավայրի ենթակառուցվածքների շինարարությունը սկսվել է 2016թ օգոստոսին, իսկ Ամուլսարի հոշոտումը, եթե թույլ տանք, կսկսվի մոտ 2 տարի անց և կտևի 10 տարի: **Տարեկան վերամշակվելու է 10 մլն տոննա հանքաքար,** իսկ ոսկու կորզումն իրականացվելու է **խիստ թունավոր և վտանգավոր նատրիումի ցիանիդի միջոցով**, որից տարեկան ներկրվելու և օգտագործվելու է **1000 տոննա**:

Ո՞վ է իրականացնում ծրագիրը և ո՞վ է ֆինանսավորում

Ամուլսարի ոսկու հանքավայրի շահագործման իրավունքը հանձնված է վերոնշյալ օֆշորային Lydian International ընկերությանը պատկանող Լիդիան Արմենիա (նախկին «Գեոթիմ») դուստր ընկերությանը: Lydian International ընկերության հիմնական բաժնետերերից են Համաշխարհային բանկի անդամ Միջազգային ֆինանսական կորպորացիան (IFC), Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկը (EBRD), Orion Mine Finance և Resource Capital Funds մասնավոր ներդրումային ընկերությունները: IFC-ն նաև վարկի միջոցով ֆինանսավորում է ծրագիրը՝ չնայած

Հայաստանի քաղաքացիների հղած **բավմաթիվ բողոքներին**: Ծրագիրը վայելում է Հայաստանի ոչ լեգիտիմ վարչակազմի բարձր հովանավորությունը, որի պատճառով դատական ատյանները մերժել են քննել ծրագրի ապօրինության հետ կապված հայցերը՝ ինչպես Թեղուտի հանքի դեպքում:

Ինչո՞ւ չպետք է շահագործվի Ամուլսարը

- Ամուլսարի ոսկու հանքի շահագործման ընթացքում կիրառվելու է նատրիումի **ցիանիդ՝ խիստ վտանգավոր միացություն մարդու առողջության և բնական միջավայրի համար:** Ցիանային հարթակը նախատեսվում է կառուցել Գնդեվազ գյուղից ընդամենը *1000* մ հեռավորության վրա, որտեղ տարեկան օգտագործվելու է *1000* տոննա նատրիումի ցիանիդ: Ցիանիդը բեռնատարներով տեղափոխվելու է Հայաստանի մի ծայրից գրեթե մինչև մյուս ծայր՝ տասնյակ համայնքների միջով:
- Այս հանքավայրի շահագործմամբ **թունավորման վտանգի առաջ են կանգնում Հայաստանի ջրային պաշարները՝** ռազմավարական նշանակություն ունեցող Կեչուտի և Սպանդարյանի ջրամբարները, Արփա և Որոտան գետերի ավազանների բնական միջավայրը, Որոտան-Արփա-Սևան ջրատար թունելն ու տարածաշրջանի քաղցրահամ ջրերի գլխավոր շտեմարան համարվող Սևանա լիճը: Բացահանքով հոսող ձնհալքի և անձրևի ջրերը ծանր մետաղներով աղտոտելու են ջրային այս ավազանների ակունքները, ինչպես տեղի է ունենում Հայաստանի հանքային այլ տարածքներում, վառ օրինակը՝ Կավարտի լքված հանքն է *(goo.gl/99yaeo)*:
- Ծանր և վտանգավոր մետաղներով հագեցած **հանքային փոշին տարածվելու է տասնյակ կիլոմետրեր՝** աղտոտելով տարածաշրջանի մարգագետիններն ու բարձրորակ արոտավայրերը:
- **Վտանգվելու են եզակի բուսատեսակներ և կենդանատեսակներ՝** վերջիններիս բնակատեղի ու էկոմիգրացիայի միջանցք համարվող Ամուլսարի՝ Արտավազդ, Տիգրան և Էրատո գագաթների ու հարակից տարածքների փաստացի վերացման արդյունքում:
- Բացի այդ, հանքավայրի նախատեսվող ենթակառուցվածքները Ջերմուկ քաղաքից ընդամենը *7* կմ հեռավորության վրա են, որտեղ էլ գտնվում են **Հայաստանի ամենահայտնի հանքային բուժիչ ջրերի աղբյուրներն ու առողջարանները,** որոնք նույնպես հանքի շահագործման արդյունքում կհայտնվեն լուրջ վտանգների առաջ:
- Հանքագործների ներհոսքով պայմանավորված ապրանքների և ծառայությունների **գնաճը** (բնակարանների և սննդի գներ) կգալի բացասական ազդեցության են թողնելու արդեն իսկ աղքատ մարդկանց վրա: Խորանալու է սոցիալական անհավասարությունը, առավել խոցելի են դառնալու տարեցներն ու կանայք:
- Ոչ տեղաբնակների (հիմնականում արական սեռի) մեծ ներհոսքի պատճառով խաթարվելու է նաև Ջերմուկ, Կեչուտ և Գնդեվազ բնակավայրերի սոցիալական հյուսվածքը: **Կանայք վրկվելու են կբոսաշրջության, առողջապահության և գյուղատնտեսության, ոլորտում ներկայիս իրենց աշխատանքներից և մղվելու սեռական շահագործման շուկա:**
- Տնտեսական օգուտների մասին խոսելը պարզապես ծիծաղելի է, հատկապես եթե հաշվի ենք առնում Հայաստանի օրենսդրական դաշտը: Միայն պատկերացրեք՝ **հանքաքարի վերամշակման արդյունքում առաջանալու են *100* մլն տոննա խիստ վտանգավոր թափոններ,** որոնց համար ընկերությունը պետական բյուջե ոչինչ չի վճարելու:
- Եթե այս ամենին ավելացնենք նաև այն, որ Ամուլսարը շահագործվելու է ընդամենը *10* տարի, ապա նախ հարց է առաջանում, թե ինչո՞ւ են այս արագությամբ ցանկանում հոշոտել Ամուլսարը, և ապա՝ ի՞նչ են անելու այս համայնքների բնակիչները *10* տարի անց, երբ գյուղատնտեսությամբ կբաղվելն արդեն անհնար կլինի մերձակա համայնքներում, իսկ Ջերմուկ քաղաքն էլ կորցրած կլինի իր առողջարանային համբավը՝ հանքի շահագործման ընթացքում հանքափորների քաղաքի կարգավիճակ ձեռք բերելու արդյունքում:

Այսպիսի խնդիրներով, և օրենսդրական լրջագույն խախտումներով ու կոռուպցիոն պրակտիկաներով հաստատված ծրագրի մասին, համացանցում կան բավմաթիվ փորձագիտական ու մասնագիտական եզրակացություններ, վերլուծական հոդվածներ, հարցազրույցներ և տեսանյութեր:

Ի՞նչ կարող ես անել դու

- **Տեղեկացի՛ր** Ամուլսարի հանքի շահագործման բոլոր ռիսկերի մասին էկոլուրի (ecolur.org) և Համահայկական բնապահպանական